




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

99

39



6 NOV 2011

ՍԿՍՆԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

391.99

Բ-89

Մ.մ.

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

1009
391.99

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

Հ Ս Խ Հ
ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԻՐԵՎԱՆ 1936



Պատ. խմբ. Սիրաս

Տեխ. խմբ.

Սրբագրիչ Հ. Դուրյանյան



Գրավիտի լիազոր № 502

Պատվեր 546, հրատ. 3690, տիրած 10.000

Պետհրատի տպարան Յերևան, 2-րդ Գնունի, 4



Հանձնված է արտադր. 7 ապրիլի 1936 թ.

Ստորագրված է տպագր. 28 ապրիլի 1936 թ.

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

О. ТУМАНЯН

ДАВИД САСУНСКИЙ

Гиз ССР Армении, Эривань, 1936 г.

Հ Ո Վ. Թ Ո Ւ Մ Ա Ն Յ Ա Ն

Հայ ժողովրդական մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թվին Լոռվա Դսեղ գյուղում:

Գրե՛ն սկսել է շատ վաղ, 10—11 տարեկան հասակից:

Թումանյանի ստեղծագործությունները վայելում են լայն ժողովրդականություն: Թումանյանը գրել է Լոռու կյանքից, նա խնամքով հավաքել ու մշակել է ժողովրդական առարկաներն ու ավանդությունները:

Իր գրվածքներում պատկերացնելով աշխատավոր գյուղացու չարքաչ գրությունը, նա ցույց է տվել ու խարազանել է այն անարդար կարգերը, վոր գոյություն ունեյին Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից առաջ:

Թումանյանն Անդրկովկասի հայ, թուրք, վրացի ժողովուրդների մերձեցման ամենաջերմեռանդ ջատագովն է յեղել և այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել, — դրա համար էլ նա սիրված ու հարգված էր նաև Վրաստանի ու Անդրկովկասի աշխատավորության կողմից:

Յերբ տեղի ունեցավ Հայաստանի խորհրդայնացումը Թումանյանն առաջինն եր, վոր վողջունեց Խորհրդային իշխանության հաստատվելը Հայաստանում և ակտիվ աշխատանքի անցավ Խորհրդային Հայաստանում, բայց դժբախտաբար 1923 թ. մարտին նա մահացավ և չկարողացավ շարունակել իր գործը:

Խորհրդային իշխանության որոք բազմաթիվ ահազամներ հրատարակել են նրա գործերը և արագ կերպով սպառվել: Մեր ընթերցող հասարակությանը, թե մեծերին և թե փոքրերին շատ լավ ծանոթ են նրա «Սասունցի Դավիթը», «Անուշը», «Թմկաբերդի առումը», «Փարվանան» և այլ պոեմները, «Դիքորը» և բազմաթիվ արձակ գրվածքներ, բանաստեղծություններն ու հեքյաթները:

I

Առյուծ-Մըհերը, զարմով դյուցազուն
Քառասուն տարի իշխում եր Սասուն.
Իշխում եր ահեղ, ու նըրա որով
Հավքն ել չեր անցնում Սասմա սարերով:
Սասմա սարերից շա՛տ ու շատ հեռու
Թընդում եր նըրա հըռչակն ահարկու,
Խոսվում եր իր փառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան եր— մի Առյուծ-Մըհեր:

II

Եսպես, ահավոր առյուծի նըման,
Սասմա սարերում նըստած եր իշխան
Քառասուն տարի: Քառասուն տարում
«Ա՛խ» չեր քաշել նա դեռ իրեն որում.
Բայց հիմի, յերբ վոր յեկավ ծերացավ,
Են անահ սիրտը ներս սողաց մի ցավ:
Սկըսավ մըտածել դյուցազուն ծերը.
— Հասել են կյանքիս աշնան որերը,
Շուտով սե հողին կերթամ յես դերի,
Կանցնի ծրխի պես փառքը Մըհերի,
Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ,
Իմ անտեր ու վորբ աշխարքի վըրա

Վոտի կը կանգնեն հազար քաջ ու դե...
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման յետե
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
Ու միտք եր անում հըսկան ծերունի:

III

Մի ուր ել՝ են գորշ հոնքերը կիտած
Յերբ միտք եր անում, յերկնքից հանկարծ
Մի հուր-հըրեղեն հայտնվեց քաջին,
Վոտները ամպոտ կանգնեց առաջին:
— Վողջո՛ւյն մեծագոր Սասմա հըսկային.
Քու ձենը հասավ Աստըծու գահին,
Ու չուտով Նա քեզ մի գավակ կըտա:
Բայց լավ իմանա, լեռների արքա,
Վոր ուրը վոր քեզ ժառանգ ե տրվել,
Են ուր կը մեռնեք քու կինն ել, դու ել:
— Իր կամքը լինի, ասավ Մըհերը.
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց վոր աշխարքում ժառանգ ունենանք,
Մենք ել նըրանով՝ անմեռ կը մընանք:
Հըրեշտակն եստեղ ցուլացավ նորից,
Ու ես յերջանիկ ավետման ուրից
Յերբ իննը ամիս, իննը ժամն անցավ,
Առյուծ-Մըհերը գավակ ունեցավ:
Դավիթ անվանեց իրեն կորյունին,
Կանչեց իր ախպեր Ձենով Ոհանին,
Յերկիրն ու վորդին ավանդեց նըրան,
Ու կինն ել, ինքն ել են ուրը մեռան:

IV

Ես դարում Մըսըր անհաղթ ու հըզոր
Մըսրա-Մելիքն եր նըստած թագավոր:
Հենց վոր իմացավ՝ ել Մըհեր չը կա,
Վեր կացավ կըռվով Սասունի վըրա:
Ձենով Ոհանը ահեց սարսափած՝
Թըշնամու առաջն յեկավ գըլխաբաց,
Աղաչանք արավ, ընկավ վոտները.
— Դու յեղիր, ասավ, մեր գըլխի տերը,
Ու քու չըվաքում քանի վոր մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,
Միայն մեր յերկիր քաղուքանդ չանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես:
— Ձեե, ասավ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաք իմ թըրի տակով,
Վոր եգուց-եւոր, ինչ ել վոր անեմ,
Վոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ:
Ու գընաց Ոհան՝ բուր-բովանդակ
Սասունը բերավ, քաչեց թըրի տակ.
Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,
Մոտ չեկավ դուշման Մելիքի թըրին:
Յեկան քաչեցին՝ թե գոռով տանեն,
Թափ տըվավ, մարդկանց գըցեց դես ու դեն,
Փոքրիկ ճըկույթը մի քարի առավ,
Ապառաժ քարից կըրակ դուրս թըռավ:
— Պետք ե սպանեմ ես փոքրիկ ծուռին,
Ասավ թագավորն իրեն մեծերին:

— Թագավոր, ասին, դու եսքան հըզոր,
 Թըրիդ տակին ե վողջ Սասունն ետոր.
 Ի՞նչ պետք ե անի քեզ մի յերեսա,
 Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա:
 — Դո՛ւք գիտեք, ասով Մըսրա Թագավոր,
 Բայց թե իմ գըլխին փորձանք դա մի ոք,
 Ես որը վըկա,
 Սըրանից կը գա:

V

Ես վոր պատահեց, մեր Դավիթ հըսկան
 Մի մանուկ եր գեռ յոթ-ութ տարեկան.
 Մանուկ եմ ասում, բայց ենքան ուժեղ,
 Վոր նըրա համար թե մարդ,—թե մըժեղ:
 Բայց վա՛յ խեղճ վորքին աշխարքի վըրա,
 Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա:
 Ձենով Ոհանին ուներ մի չար կին:
 Մին-յերկու լըռեց, մի ոք ել կարգին
 Իրեն մարդու հետ սկըսավ կըռվել.
 — Յես մենակ հոգի, հազար ցավի տեր,
 Ի՛նչ ես ուրիշի վորքին տուն բերել,
 Նըստեցրել գըլխիս պարապ հացակեր...
 Հո՛ղեմ գըլխը... յես գերի հո չե՞մ
 Ամենքի քեֆի յետևից թըռչեմ...
 Մի-կուռ կորցըրո՛ւ, կարգի՛ր մի բանի,
 Գընա իր համար աշխատանք անի...
 Ու հետն սկըսավ վողըսլ ու կոծել,

Իր որը սըգալ, իր բախտն անիծել,
 Թե անբախտ յեղավ աշխարքի միջում,
 Վոչ մի տեր ունի, վոչ մարդն ե խըղճում...
 Գընաց Ոհանը յերեսի վոտի
 Մի գույզ վոտնաման բերավ յերկաթի,
 Յերկաթի մի կող շալակին դըբաժ,
 Ու արավ Սասմա քաղքի դառնարած:

VI

Քըչեց դառները մեր հովիվ հըսկան,
 Յելավ Սասունի սարերն աննըման.
 «Ե՛յ Զան, սարե՛ր,
 Սասման սարե՛ր...»
 Վոր կանչեց նըրա ձենից ահավոր
 Դըղորդ-դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր,
 Վայրի գազաններ բընեցից փախան,
 Քարեքար ընկան, դատարկուն յեղան:
 Դավիթը ընկավ նըրանց յետևից,
 Վորին մի սարից, վորին մի ձորից—
 Աղվես, նապաստակ, դել, յեղնիկ բըռնեց,
 Հավաքեց, բերավ, դառներին խառնեց,
 Իրիկվան քըչեց վողջ Սասմա քաղաք:
 Կաղկա՛նձ ու վոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
 Քաղքըցիք հանկարծ մին ել են տեսան՝
 Գալխս են հըրես անհամար դադան.
 «Վա՛յ հարա՛յ փախե՛ք...»
 Մեծեր, երեսներ

Սըրտաճաք յեղած,

Գործները թողած,

Վորը տուն ընկավ, վորը ժամ, խանութ,

Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:

Դավիթը յեկավ, կանգնեց մեյդանում:

— Վա՛հ, ես մարդիկը ի՛նչ վաղ են քընում:

Հե՛յ ուլատեր, հե՛յ դառնատեր,

Յե՛լեք, շուտով բացեք դռներ:

Ով մինն ուներ—տասն եմ բերել,

Ով տասն ուներ—քըսանն արել...

Շուտով յելե՛ք, յեկե՛ք, տարե՛ք,

Ձեր դառն ու ուլ գոմերն արեք:

Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,

Ինքն ել մեկնրվեց քաղքի մեյդանում,

Դըլուխը դըրավ մի քարի՝ մընաց

Ու մուշ—մուշ քընեց մինչև լուսաբաց:

Լուսին իշխաններ յելան միասին,

Գընացին Ձենով Ոհանին ասին:

— Տո՛ Ձենով Ոհան, տո՛ մահի տարած,

Ես խենթը բերիր, արիր գառնարած,

Վոչ գառն ե ջոկում, վոչ գելն ու աղվես,

Դադանով լըցրեց մեր քաղաքն եսպես:

Աստված կըսիրես՝ դե՛ր ուրիշ բանի,

Թե չե ես խալխին լեղաճաք կանի:

Յեկավ Ոհանը, Դավթի մոտ գընաց:

— Հորեղբայր Ոհան, հեռո՛ւ յեկ, կամա՛ց,

Ուլեր կըփախչեն:—Մին ել ենտեղից

Մի բեզ նապաստակ, ալանջները ցից,

Խրտնեց ու ահից դուրս արծավ հանկարծ:

Դավիթն եր. յեկավ, յետևից ընկած

Են սարը քըչեց, յետ բերավ ես ձոր,

Բերավ, ուլերին խառնեց նորից նոր:

— Ո՛հ, ի՛նչ դըժար ե, հորեղբայր Ոհան:

Աստված ոխնել ե են սև-սև ուլեր,

Ամա բողալուկ ես ուլեր, վոր կան,

Փախչում են, ցըրվում վողջ սարերն ի վեր:

Ենքան եմ յերեկ վաղել, չարչարվե՛լ,

Մինչև հավաքել ու տուն եմ բերե՛լ...

Նայեց Ոհանը, վոր Դավթի հագին

Վտնաման չի յել մընացել կարգին,

Մահակն ե մաշվել, մինչ բուռն ե հասել,

Մի որվա միջում ենքան ե վաղել:

— Դավի՛թ ջան, ասավ, չեմ թողնի եսպես,

Բողալուկ ուլեր չարչարում են քեզ:

Եգուց նախիրը կըտանես արոտ:

Ասավ Ոհանը ու մյուս առավոտ

Գընաց, նորից նոր մեր Դավթի վոտի

Մի ջուխտ նոր տըրեխ բերավ յերկաթի,

Յերկաթի մի կոռ հարյուր լըգրական

Ու չինեց Սասմա քաղքի նախապան:

Գըչեց նախիրը մեր նախորդ հրական,
Յեւով Սասունի սարերն աննրման:

— «Ե՛յ, ջան սարեր,
Սասման սարե՛ր,
Ի՛նչ անուշ ե

Ձեր լանջն ի վեր...»

Վոր կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ-գըմբղմբոցն ընկավ սար ու ձոր:

Վայրի գազաններ բընեցից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն յեղան:

Դավիթն եր. ընկավ նրանց յետևից,
Վորին մի սարից, վորին մի ձորից,

Գել, ինձ, առյուծ, արջ վագրը բըռնեց,
Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց

Ու առաջն արավ դեպ Սասմա քաղաք:
Վոռնո՛ց մըռընչո՛ւն, աղմո՛ւկ, աղաղա՛կ...

Վախկոտ քաղքըցիք մին ել ի՛նչ տեսան,
Հենց քաղքի վըրա անհամար գազան...

— «Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...»

Մեծեր, երեխեք

Սըրտաճաք յեղած,

Գործները թողած

Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ:
Ամուր փախեցին դուռն ու լուսամուտ:

Դավիթը յեկավ կանգնեց մեյդանում:

— Վա՛հ, ես քաղքըցիք ի՛նչ վաղ են քընում:

Հե՛յ կովատեր, հե՛յ դոմչատեր,
Յելե՛ք, շուտով բացեք դըռներ,
Ով մինն ուներ—տասն եմ բերել,
Ով տասն ուներ—քըսանն արել:
Շուտով յելե՛ք, յեկե՛ք տարե՛ք,
Ձեր յեղն ու կով գոմերն արեք:

Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն ել մեկնրվեց քաղքի մեյդանում,

Գըլուխը դըրավ մի քարի, մընաց,

Ու մուշ—մուշ քընեց մինչև լուսաբաց:

Լուսին իշխաններ յեկան միասին,

Գընացին Ձենով Ոհանին ասին.

— Ամա՛ն, քեզ մատաղ, ա՛յ Ոհան ախպեր,

Մեր յեղն ու մեր կով թող մընան անտեր,

Միայն սրանից ազատ արա մեզ:

Վոչ արջն ե ջոկո՞ւմ, վոչ գոմե՛շն ու յեզ,

Մի որ ես քաղքին փորձանք կըբերի,

Արջերոց կանի, կըտա կավերի:

IX

Դավիթ չըդառավ, մի կըրա՛կ դառավ:

Ճարը կըտըրված՝ Ոհանը բերավ

Նետաղեղ չինեց ու տըրվավ իրեն՝

Գընա, վորս անի սարերի վըրեն:

Դավիթ նետաղեղն առավ Ոհանից,

Հեռացավ Սասմա քաղքի սահմանից

Ու դառավ վորսկան: Գնաց, մի կորկում

Լոր եր սպանում, ճնճղուկ եր զարկում,
 Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
 Աղքատ, անվորդի մի ծեր կընկա մոտ,
 Վիշապի նըման, յերկա՛ր, ահագի՛ն
 Մեկնըվում, քընում կըրակի կողքին:
 Մի ուր ել, յերբ վոր իր վորսից դարձավ,
 Պառաւլը վըրեն սաստիկ բարկացավ.
 — Վա՛յ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ,
 Դո՞ւ պետք ե են հոր զավակը լինե՛ս:
 Ձեռից ու վոտից ընկած մի ծեր կին—
 Յես եմ ու են արան Աստըծու տակին,
 Ինչո՞ւ յես գընում, տաւիում, տըրորում,
 Իմ ամբողջ տարւան ապրուստը կըտըրում:
 Թե վորսկան ես դու—նետ—աղեղդ ա՛ռ,
 Ծըծմակա գըլխից մինչև Սեղանսար
 Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ,
 Վորսով մեջը լի վորսի սար ուներ.
 Յեղնիկ կա ենտեղ, այծյամ ու պախրա.
 Կարո՞ղ ես—դընա, ենտեղ վորս արա:
 — Ի՞նչ ես ա՛յ պառավ, ել ինձ անիծում.
 Յես ջահիլ եմ դեռ, յես նոր եմ լըսում:
 Վո՞րտեղ ե հապա սարը մեր վորսի...
 — Գընա՛, հորեղբայրդ—Ոհանը կասի:

X

Հորեղբոր շեմքում մյուս ուրը ծեգին
 Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին:

— Հորեղբայր Ոհան, ինչո՞ւ չես ասե՛յ
 Իմ հերը վորսի սար ե ունեցել,
 Այծյամ կա ենտեղ, յեղջերու, կըխտար.
 Վեր կաց, հորեղբայր, տար ինձ վորսասար:
 — Վա՛յ,— կանչեց Ոհան, եդ քու խոսքը չեր,
 Եդ ուլ քեզ ասավ, լեզուն պապանձվեր:
 Են սարը, վորդի՛, գընաց մեր ձեռից,
 Են սարի վորսն ել գընաց են սարից,
 Ել չկան այծյամ, յեղջերու, կըխտար:
 Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,
 (Ե՛յ գիդի որեր—վո՞րտեղ եք կորել)
 Յես շատ եմ ենտեղ վորսի միս կերել...
 Քու հերը մեռավ, Աստված խըռովեց,
 Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
 Յեկավ, մեր յերկիր քարուքանդ արավ,
 Ես սարի վորսն ել թալանեց, տարավ.
 Յեղնիկը գընաց, յեղջերուն գընաց...
 Մեր գիրն ել հալրաթ եսպես եր գրած:
 Անցել ե, վորդի, քու բանին գընա,
 Մըսրա թագավոր ձենըդ կիմանա...
 — Մըսրա թագավոր ինձ ի՞նչ կանի վոր...
 Յես ինչ եմ հարցնում Մըսրա թագավոր.
 Մըսրա թագավոր թող Մըսըր կենա,
 Իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...
 Վեր կաց, հորեղբայր, նետ—աղեղդ առ,
 Կապարճըդ կապի՛ր, գընանք վորսասար:
 Յեկավ Ոհանը ճարը կըտըրված,
 Գընացին տեսան՝ ել ի՛նչ վորսասար.

Սնտառը ջարդած, պարխպն տվերած,
Բուրգերը արած գետնին հավասար...

XI

Գիշերը հասավ, մընացին ենտեղ:
Ձենով Ոհանն էր, իր նետն ու աղեղ
Դըրավ գլխի տակ, հանգիստ խըռմփաց.
Դավիթը մընաց մըտքի ծովն ընկած:
Մին ել նկատեց, վոր մութը հեռվում
Մի թեթ, փայլիլուն կըրակ է վառվում:
Են լուսը բըռնած՝
Վեր կացավ, գընաց,
Դընաց ու գընաց, բարձրացավ մի սար,
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար
Կիսից պատըռված,
Ու միջից վառված
Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,
Բարձրանում, իջնում յետ քարի վըրա:
Վար իջավ Դավիթ ենտեղից կըրկին,
Վար իջավ, կանչեց Ձենով Ոհանին:
— Յե՛լ, հորեղբայր, քանի՞ քընես,
Յե՛լ, են պայծառ լուսը մի տես:
Լուս է իջել բարձըր սարին,
Բարձըր սարին, մարմար քարին:
Յե՛լ, հորեղբայր, անուշ քընից.
Են ի՞նչ լուս է բըխում քարից:
Յե՛լավ, խաչ քաշեց Ոհանն յերեսին.

— Ե՛յ, վորդի, ասավ, մեռնեմ իր լուսին,
Են մեր Մարութա սարն է զորավոր:
Են լուսի տեղը կանգնած եր մի որ
Սասմա ապավեն, Սասմա պահապան
Մեր սուրբ Տիրամոր վանքը Չարխափան:
Մըշտական, յերբ վոր կըռիվ եր գընում,
Ենտեղ եր քու հերն իր աղոթքն անում:
Քու հերը մեռավ, Աստված խըռովեց,
Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Մեր վանքն ել յեկավ քանդեց են սարում,
Բայց գեռ սեղանից լուս է բարձրանում...

XII

Դավիթը ես ել յերբ վոր իմացավ,
— Անո՛ւշ հորեղբայր, հորեղբայր, ասավ,
Վորբ եմ ու անտեր աշխարքի վըրա,
Հեր չոռնեմ՝ դու ինձ հերություն արա:
Ել չեմ իջնի յես Մարութա սարից,
Մինչև չըչինեմ մեր վանքը նորից:
Քեզանից կուգեմ հինգհարյուր վարպետ,
Հինգհազար բանվոր մըշակ նըրանց հետ,
Վոր դան՝ ես չարաթ կանգնեն ու բանեն,
Առաջվան կարգով մեր վանքը չինեն:
Դընաց Ոհանը ու բերավ իր հետ
Հինգ հազար բանվոր, հինգհարյուր վարպետ:
Վարպետ ու բանվոր յեկան կանգնեցին,
Չըրը՛խկ հա թըրը՛խկ, նորից չինեցին,



Առաջման կարգով, փառքով փառամոր
Բարձր Մարութա վանքը Տիրամոր:
Յըրված միաբանք յետ նորից յեկան,
Նորից թընդացին աղոթք, չարական:
Ու յերբ չեն արավ հոր վանքը նորից,
Յած իջավ Դավիթ Մարութա սարից:

XIII

Համբավը տարան Մըսրա Մելիքին.
— Հապա՛ չես ասիլ՝ Դավիթը կրկին
Հոր վանքը շինել, իշխան ե դառել,
Դու ոխտը տարվան խարժը չես առել:
Մելիք զայրացավ.
— Գընացե՛ք ասավ,
Բադին, Կողբադին,
Սյուդին, Չարխադին,
Սասմա քար ու հող տալին ու վեր արեք,
Իմ ոխտը տարվան խարաժը բերեք:
Քառնուն կույս աղջիկ բերեք արմաղան,
Քառսուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
Քառսունն ել յերկար, վոր ուղտեր բառնան,
Իմ տանն ու դըռան դարափաչ դառնան:
Ու Կողբադին առավ զորքեր.
— Գըլխիս վըրա, ասավ, իմ տեր.
Գընամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով դեղին վոսկի,

Տեղը ջընջեմ Հայոց աղգի:
Ասավ, Մըսրա աղջիկ ու կին
Պար բռնեցին ու յերգեցին.
— Մեր Կողբադին գընաց Սասուն,
Կանայք բերի քառսուն-քառսուն,
Քառսուն բեռով վոսկի բերի,
Մեր ճակատին չարան չարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Գարնան շինենք յեղ ու չորթան:
Ջա՛ն Կողբադին, քաջ Կողբադին,
Սասմա Դավթին զարկեց դետին:
Ու Կողբադին փըրված, ուռած,
— Շնորհակալ եմ, ըույրե՛ր, գոռաց
Մինչև դալըս դեռ համբերեք,
Են ժամանակ պիտի պարեք...

XIV

Եսպես յերգով,
Չոռով-զորքով
Գոռ Կողբադին մըտավ Սասուն.
Ոհան լըսեց՝ կապվեց լեզուն:
Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն յելավ,
Խընդիրք արավ.
— Ինչ վոր կուղես առ, տա՛ր, ամա՛ն.
Վարդ աղջիկներ կանայք Սասման,

Դառը դադած դեղին վոսկին,
 Միայն թե գըթա մեր խեղճ ազգին,
 Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,
 Վերև՝ Աստված, ներքև՝ դու...
 Ասավ, բերավ շարան-շարան
 Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
 Ու Կողբադին կանգնեց, ջոկեց,
 Մարազն արավ, դուռը փակեց:
 Քառսուն կույս աղջիկ, սիրուն արմաղան,
 Քառսուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
 Քառսուն ել յերկար, վոր ուղտեր բառնան,
 Մըսրա Մելիքին զարավաչ դառնան:
 Դեզ-դեզ կիտեց դեղին վոսկին.
 Սև սուգ կալավ Հայոց ազգին:

XV

Հե՛յ, ո՞ւր ես, Դավիթ, Հայոց պահապան,
 Քարը պատընվի—դո՛ւրս արի մեյդան:
 Քանդած հոր վանքը վոր շինեց նորից,
 Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,
 Ժանգոտած, անկոթ մի շեղբիկ գըտավ,
 Գընաց՝ պառավի շաղգամը մըտավ:
 Պառափն եր. յեկավ՝ անե՛ծք, աղաղա՛կ.
 — Վա՛յ, խեղա՛ն Դավիթ, շաղգամի տեղակ
 Դու կըրակ ուտես, ցավ ուտես, ասավ,
 Քու աչքն աշխարքում մենակ ի՞նձ տեսավ.
 Կորեկըս արիր գետնին հավասար,

Ես եր մընացել ձըմեռվան պաշար,
 Ես ել կըտրում ես,
 Ել վո՞նց ապրեմ յես:
 Թե կըտրիճ ես դու, աղեղդ ա՛ն, գընա՛,
 Քու հոր աշխարքին տիրություն արա՛,
 Քու հոր գանձը կե՛ր,
 Թողել ես անտեր:
 Մըսրա թագավոր զըրկել ե՝ տանի:
 — Ել ի՞նչ ես վըրես բարկանում, նանի՛,
 Եդ ի՞նչ ես ասում, յես չեմ հասկանում,
 Մըսրա թագավոր մեր ի՞նչն ե տանում...
 — Մըսրա թագավոր մեր ի՞նչն ե տանում...
 Մըսրա թագավոր քու աչքն ե հանում,
 Դանդալոշ Դավիթ. զըրկել ե հըրեն,
 Յեկել են Սասմա քաղաքի վըրեն
 Բադին, Կողբադին,
 Սյուդին, Չարխադին,
 Թալան են տալի բովանդակ Սասում.
 Քառսուն բեռ վոսկի խարաջ են ուզում,
 Քառսուն կույս աղջիկ սիրուն, արմաղան,
 Քառսուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
 Քառսուն ել յերկար, վոր ուղտեր բառնան,
 Մըսրա Մելիքին զարավաչ դառնան:
 — Ի՞նչ ես, ա՛յ պառավ, ել ինձ անիծում.
 Ցուլց տուր մի տեսնեմ՝—վո՞րտեղ են ուզում:
 — Վո՞րտեղ են ուզո՛ւմ... Մահըս տանի քե՛զ.
 Դո՞ւ պետք ե են հոր զավակը լինե՛ս...
 Յեկել ես՝ եստեղ շաղգամ ես լալում...

Վոսկին Կողբադին ձեր տանն ե չափում,
 Աղջիկներ փրկեկ մարազն են լըցրած:
 Շաղգամը թողեց Դավիթ ու գընաց:
 Տեսավ՝ Կողբադին իրենց տան միջին
 Չափում ե վոսկին թեղած առաջին,
 Սյուղին, Չարխադին պարկերն են բըռնել,
 Չենով Ոհանն ել շըլինքը ծըռել,
 Կանգնել ե հեռու, ձեռները ծոցին:
 Տեսավ, աչքերը արնով լըցվեցին:
 — Վե՛ր կաց, Կողբադին, հեռո՛ւ կանգնիր դու,
 Իմ հոր վոսկին ե— յես եմ չափելու:
 — Կողբադին առավ, — Ե՛յ, Չենով Ոհան,
 Կրտաս—տո՛ւր խարջը ես ոխար տարվան
 Թե չե՛ կը գընամ, միբուքըս վրկա,
 Մըսրա—Մելիքին կը պատմեմ, կը դա,
 Ձեր Սասմա յերկիր քար ու քանդ կանի,
 Տեղը կը վարի, բոստան կը ցանի:
 — Կորե՛ք, անդգամ դուք Մըսրա շըններ,
 Բեռ չե՛ք իմացել դուք Սասմա ծըռեր...
 Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ չըվաք,
 Կուղեք մեր յերկիր գընեք խարջի տա՛կ...
 Բարկացավ Դավիթ, չափը չըպըրտեց,
 Տըվավ Կողբադնի գըլուխը ջարդեց,
 Չափի փըշրանքը պատն անցավ, գընաց,
 Մինչև որս ել դեռ գընում ե թըռած:
 Ու յեւան՝ թափած վոսկին թողեցին,

Հայոց աշխարքից փախան գընացին
 Բադին, Կողբադին,
 Սյուղին, Չարխադին:

XVI

— Վա՛յ, վա՛յ, հորեղբա՛յր, ի՛նչ ասեմ յես քեզ:
 Մենք ունենք ետեղ դեղին վոսկու դեզ:
 Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
 Դու թողել ես ինձ ոտարի դըռան...
 Հորեղբայրն առավ. — Ա՛յ խենթ, խեղադար,
 Վոսկին պահել եմ Մելիքի համար,
 Վոր քաղցըր լինի աչքը մեզ վըրա:
 Չըսըվիր, հիմի վոր գորք առնի՝ դա,
 Սասմա քար ու հող հեղեղի, տանի,
 Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըռիվ կանի:
 — Դու կա՛ց, հորեղբա՛յր, թող դա, յե՛ս
 կերթամ:
 Կերթամ, յե՛ս նըրան պատասխան կըտամ:
 Ու մութ մարադի դըռանը զարկեց,
 Փակած աղջիկներ հանեց, արձակեց:
 — Գընացե՛ք առավ, ազատ ապրեցե՛ք,
 Սասունցի Դավթին արև խընդրեցեք:

XVII

Ետպես ջարդված, արյունըլվա
 Փախան, ընկան հողը Մըսրա
 Բադին, Կողբադին,

Սյուդին, Չարխադին:

Մըսրա կանայք հեռվից տեսան,

Հեռվից տեսան, ուրախացան

Ու ծափ տրվին կրտսերներին.

— Յեկա՛ն, յեկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...

Մեր Կողբադին գնաց Սասուն,

Կանայք բերավ քառսուն-քառսուն,

Կարմիր կովեր բերավ կըթան՝

Գարնան շինենք յեղ ու չորթան...

Հենց մոտեցան, նըկատեցին,

Ծափ ու խընդում ընդհատեցին,

Քըրքըջացին

Ու կանչեցին.

— Ե՛յ, Կողբադին մեծաբերան,

Եդ վո՞րտեղից լերան-լերան,

Լերան-լերան կըզաս փախած:

Հաստ գըլուխըդ կիսից ճըղած:

Են դո՞ւ չասիր՝ գընամ Սասուն,

Կանայք բերեմ քառսուն-քառսուն,

Քառսուն բեռնով վոսկի հանեմ,

Հայոց յերկիր ավեր անեմ:

Գացիր Սասուն քանց գել դազան,

Յետ ես դալիս քանց շուն վազան...

Ու Կողբադին խիստ բարկացավ.

— Սո՛ւա կացեք դուք, լըրբե՛ր, ասա՜վ.

Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,

Դուք չե՞ք տեսել Սասմա ծըռեր:

Սասմա ծըռեր լերան-լերան,

~~Նեա՛կ~~ ունեն մի-մի գերան.

Սասմա յերկիր քար ու կապան,

Դըժար սարեր, ձոր ու ծապան.

Նըրանց խոտեր—ինչպես կեռ թուր,

Ձորք ջարդեցին յերեք հարյուր.

Ասավ ու ել չառավ դադար,

Վըռադ-վըռադ, գըլխապատառ

Վազեց իրեն թագավորին:

Խընդաց թագավորն իր աթոռին:

— Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կողբադին,

Արժե՛ կախեմ յես քու ճըտին

Մեր դուզդունի մեծ նըշանը—

Պարզե քու մեծ հաղթությանը:

Ո՞ւր են, հապա առաջըս բեր

Սասմա վոսկին ու աղջիկներ:

Ասավ Մելիք, ու Կողբադին

Գըլուխ տըվավ մինչև գետին.

— Ապրա՛ծ կենաս, մեծ թագավոր,

Ձոռո՛ւ վախա յես ձիավոր,

Վո՞նց բերեյի Սասմա վոսկին:

Մի խենթ ծընվեց Հայոց ազգին,

Վոչ ահ գիտի, վոչ տեր ու մեծ,

Գըլուխս եսպես տըվավ, ջարդեց.

«Ձե՛մ տալ, ասավ, իմ հոր վոսկին,

Ձե՛մ տալ կանայքն իմ հայ ազգին,

Սասմա յերկիր ձեղ տեղ չըկա...

Քու թագավոր՝, ասավ, թո՛ղ դա,

Թող դա՝ ինձ հետ կըռիվ անի,

Թե զոչաղ ե՛զ զոռով տանի»:

Կատաղեց, փըրփրեց Մըսրա թագավոր:

— Կանչեցե՛ք, ասով, իմ զորքը բոլոր:

Հազար հազար մարդ նորեկուկ մանուկ,

Հազար հազար մարդ անբեխ, անմորուք,

Հազար հազար մարդ բեխը նոր ծըլած,

Հազար հազար մարդ նոր թախտից յելած,

Հազար հազար մարդ թուխ միրուքավոր,

Հազար հազար մարդ սպիտակ ալևոր,

Հազար հազար մարդ, վոր փողեր հընչեն,

Հազար հազար մարդ, վոր թըմբուկ զարկեն...

Կանչեցե՛ք, թող գան, հագնեն զե՛նք, զըրա՛հ,

Կըռիվ տի գընամ յես Դավթի վըրա,

Սասունն ավերեմ,

Հեղեղեմ, բերեմ:

XVIII

Եսպես անհամար զորքեր հավաքեց,

Յեկավ Սաոմա դաշտ, բանակը զարկեց

Ու ծանրը նըստեց Մըսրա թագավոր:

Ենքան ահադին բազմությունն են որ

Բաթմանա ջրերն յեկավ ու չոքեց,

Ով յեկավ, խըմեց—գետը ցամաքեց,

Սաոմա քաղաքում մընացին ծարավ:

Ձենով Ոհանին զարմանքը տարավ:

Դուրքը ուն առավ, սարը բարձրացավ:

Սարը բարձրացավ, տեքավ, ի՛նչ տեսավ:

Ճերմակ վըրանից դաշտը ճըմակել,

Ասես՝ են գիշեր ճըմեռը յեկել,

Սպիտակ ձյունով պատել եր Սասուն:

Լեզին ջուր կտրեց, կապ ընկավ լեզուն,

Հարա՛յ կանչելով՝ փախավ տուն ընկավ,

— Վա՛յ փախե՛ք, յեկա՛վ... հա՛յ, հարա՛յ

յեկավ...

— Ի՞նչը, հորեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն յեկավ...

— Յավն ու կըրա՛կը Դավթի պինչն յեկավ:

Մըսրա թագավոր յեկել ե, յեկել,

Յեկել, մեր դաշտին բանակ ե զարկել:

Թիվ կա ասողերին, թիվ չկա զորքին...

Վա՛յ մեր արեին, վա՛յ մեր աշխարքին...

Յե՛կ, վոսկին տանենք, աղջիկներ տանենք,

Ձոքենք առաջին, պաղատանք անենք,

Դուցե թե գըթա,

Մեզ սըրի չըտա...

— Դու կա՛յ, հորեղբա՛յր, գու դարդ մի՛ անիր-

Դընա, ըու ողում գու հանգիստ քընիր:

Հիմի յես կելնեմ, Սաոմա դաշտ կերթամ,

Մըսրա-Մեկիքին պատասխան կըտամ:

Ու գընաց Դավթ ծանոթ պտռավին:

— Նանի ջա՛ն, ասով, ժանգոտած ու հին

Յերկաթի կըտոր, անթարոց, շամփուր,

Ինչ ունես չունես՝ հավաքի՛ր, ինձ տուր,

Մի եչ ել գըտիր, վոր վըրեն նստեմ,

Կըռիվ տի գընամ Մըսրա զորքի դեմ:

— Վա՛յ, Դավիթ, ասա՛վ, մահս տանի քեզ.
 Դո՞ւ պետք է են հոր զավակը լինե՛ս...
 Ո՛ւր է քու հոր հըրեղեն ձին,
 Ո՛ւր է քու հոր Թուր Կեծակին,
 Ո՛ւր է քու հոր գոտին վոսկի,
 Խաչ պատրաստին իր աջ բազկի,
 Ո՛ւր է քու հոր ծալ-ծալ կապեն,
 Գոլըզը պողպատ, Թամբ սաղափեն,
 Վոր յեկել ես, ա՛յ խենթ ու ծուռ,
 Ինձնից կուզես եչ ու շամփո՛ւր...
 — Ի՛նչ ես, նանի, ել բարկանում,
 Չահել եմ յես, չեմ իմանում.
 Յես քեզնից եմ լըսում եսոր.
 Չենք ու զըրահն ո՞ւր են իմ հոր:
 — Հորեղբորդդ գընա հարցուր.
 Ո՞ւր են, ասա, հանի՛ր, բեր, տուր:
 Բան է, Թե վոր չըտա սիրով,
 Աչքը հանի՛ր՝ խըլի՛ր զոռով:

XIX

Դավիթ գընաց Ոհանի մոտ.
 — Ե՛յ հորեղբայր, իմ հերահոտ,
 Տո՛ւր ինձ իմ հոր հըրեղեն ձին,
 Տո՛ւր ինձ իմ հոր Թուր Կեծակին,
 Տո՛ւր ինձ իմ հոր գոտին վոսկի,
 Խաչ պատրաստին իր աջ բազկի,
 Տո՛ւր ինձ իմ հոր ծալ-ծալ կապեն,

Գոլըզը պողպատ, Թամբ սաղափեն...
 — Քու հոր մահվան տարուց՝ որից
 Դուքս չեմ հանել ձին ախոռից,
 Վոչ քընդուկից Թուր-Կեծակին,
 Չըրահ չապիկ, վոսկի գոտին...
 Ինձ Թող, ամա՛ն, մի՛ սպանիր,
 Կուզես՝ հըրեն, գընա հանի՛ր:

XX

Հազա՛վ Դավիթ ղենքն ու զըրահ,
 Կապեց գոտին, Թուր-Կեծակին,
 Խաչն ել իր հաղթ բազկի վըրա,
 Յելավ, հեծավ Առյուծ հոր ձին,
 Կանչեց, իր ձին ասպանդակեց:
 Չենով Ոհան լալով յերգեց.
 — Ափսո՛ս, հազա՛ր ափսոս հըրեղեն մեր ձին,
 Ա՛խ, հըրեղեն մեր ձին.
 Ափսո՛ս, հազա՛ր ափսոս մեր վոսկի գոտին,
 Ա՛խ, մեր վոսկի գոտին.
 Ափսո՛ս, Թանկ կապեն, վոր հագին տարավ,
 Ա՛խ, վոր հագին տարավ...

Դավիթ բարկացավ,
 Չին քչեց, զարձավ,
 Ոհանը վախեց,
 Իր յերզը փոխեց.
 «Ափսո՛ս, նորելուկ Դավիթըս կորավ,
 Ա՛խ, Դավիթըս կորավ»:

Ես վոր իմացամ,
Դավիթ մեղմացամ,
Իջամ, Ոհանի ձեռքը համբուրեց:
Ձենով Ոհանն ել, ինչպես հայր ու մեծ,
Որհնեց, խորատեց նըրան հայրաբար,
Դեպի Սասմա դաշտ դըրամ ճանապարհ:

XXI

Սասունցի Դավթին ուներ մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ աժդահա:
Սա ել իմացամ համբավը կըովի,
Մի բարդի ուսին դալիս ե ահա:
Գալիս ե՝ հեովից բարձրը գոռալով.
— Ի՞նչ եք վեր յեկել ես դաշտի միջում,
Քանի գըլխանի մարդիկ եք կամ ո՞վ,
Սասունցի Դավթին վոր չեք ճանաչում...
Բա չե՞ք իմանում, վոր եստեղ ե նա
Գալու՝ խողացնի իր ձին թևավոր.
Ձըքվեցե՛ք, հիմի ուր վոր ե՝ կըգա,
Յեկել եմ սըրբեմ մեյդանը ետոր:

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դավիթն ել ահա սարի գազաթին
Կանգնած՝ գոռում ե վիշապի նըման.

— Ով քընած եք՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն եք՝ յեկե՛ք, կեցե՛ք,

Ով կեցել եք՝ դենք կապեցե՛ք,
Ձենք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,
Ձի յեք թամբել՝ յեկե՛ք, հեծե՛ք.
Հեռո չասեք՝ թե մենք քընած—
Դավիթ գող-գողյալով, գընաց...

Եսպես կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կեծակ զարկի,
Մըսըս գորքի մեջ տեղ զարկեց,
Շողացնելով Թուր-Կեծակին:

Ջարդեց, փըշրեց մինչև կեսոր.
Կեսոր արինն յելավ հեղեղ,
Քըշեց, տարավ հազարավոր
Մարդ ու դիակ վողջ միատեղ:

Կար գորքի մեջ մի ալևոր,
Աշխարք տեսած ու բանադետ.
— Տըղե՛րք, ասավ, ճամբա տըվեք,
Գընամ խոսեմ յես Դավթի հետ:

Գընաց, կանգնեց Դավթի առաջ,
Եսպես խոսեց են ծերունին.
— Դալար կենա՛ կուռըդ, ով քաջ,
Սուրըդ կըտրուկ միշտ քու ձեռին:

Մի ծերունուս խոսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ ե կըտրում:

Ի՞նչ են արել քեզ ես մարդիկ,
Հե՞ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր վորդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Վորը կինն ե թողել ենտեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ,

Վորը մի տուն լիք մանուկներ,
Վորը ծընող աղքատ ու ծեր,
Վորը լացով, քողն յերեսին
Նորապըսակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-թըրով
Հավաքել ե, հստեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս որով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել:

Թագավորն ե քու թըշնամին,
Կըռիվ ունես— իր հետ արա,
Հե՞ր ես քաշում թուր-կեծակին
Ես անճարակ խալխի վըրա:

— Լավ ես ասում դու, ծերունի՛,
Ասավ Դավիթն ալևորին,
Բայց Թագավորն ո՞ւր ե հիմի,
Վոր սև կապեմ նըրա որին:

— Մեծ վըրանում քընած ե նա,
Ե՞ն, վոր միջից ծուխը կելնի.
Են ծուխն ել հո ծուխ չի վոր կա,
Գոլորչին ե իր բերանի:

Ասին. դեպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դավիթն իր ձին,
Քըչեց, գընաց ու դըռանը
Գոռաց կանգնած արարներին.

— Ո՞ւր ե, ասավ, ի՞նչ ե կորել,
Դուրս կանչեցե՛ք, գա ասպարեզ,
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ գըրողն եմ յես...

— Մեղիքն ասին, քուն ե մըտել,
Ոխտը որով պետք ե քընի.
Յերեք որն ե դեռ անցկացել,
Չորս որ ել կա, քունը առնի:

— Ի՞նչ, բերել ե աղքատ ու խեղճ
Խալխին լըցրել ծովն արյունի,
Ինքը մըտել վըրանի մեջ՝
Ոխտը որով հանգիստ քընի՛...

Քընել-մընել չեմ հասկանում,
Վե՛ր կացրեք չո՛ւտ, դուրս գա մեյդան,
Ենպես դըրան յես քընացնեմ,
Վոր չը գարթնի ել հավիտյան:

Յեւան՝ մարդիկ ճարահատոված
Շամփուր դըրին թեժ կըրակին
Ու դարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մեւթի բաց կըրնկին:

— Ո՛Ք, ել հանգիստ քուն չունի մարդ
Ես անիծված-լըվի ձեռից,
Խոր մըրընչաց հըսկան հանդարտ
Ու չուռ յեկավ, քընեց նորից:

Յեւան, բերին մեծ գութանի
Խոփը դըրին թեժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կեծկըծալի,
Շիկնած տըվին մերկ թիկունքին:

— Ո՛Ք, ել հանգիստ քուն չունի մարդ
Ես անիրավ մոծակներից,
Աչքը բացավ հըսկան հանդարտ,
Ուղում եր յեա քընել նորից,

Տեսավ՝ Դավթին: Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըրընչալով,
Փըչեց վըրեն, վոր թըսցընի
Են ածղըհին մի փըչելով:

Տեսավ, տեղից ժաժ չի գալի,
Չարմանքն ու ահ պատեց հողին:
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին:

Նայեց թե չե, գզաց՝ իր մեջ
Տասը գոմչի ուժ պակասեց:
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խոսեց:

— Բարո՛վ, Դավիթ, հոգնած ես դեռ...
Յե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,
Հենո դարձյալ կըռիվ կանենք,
Յեթե կըռիվ կուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառսուն գաղ խոր հոր եր փորել,
Յանցով փակել մութ բերանը,
Վըրեն փափուկ խալի փրոել:

Ու՛մ վոր հաղթել չեր կարենում,
Շողոմեյով կանչում եր նա,
Նըստեցնում եր իր վըրանում
Են կորստյան հորի վրա:

Իջավ Դավիթ ձիուցը ցած,
Գընաց նըստեց... ընկավ հորը:
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց
Մըսրա դաժան թագավորը:

— Դե, թող հիմի գընա՛ խավար
Հորում փըթի, ենքան մընա:

Ու ահագին մի ջաղացքար
Բերավ, դրավ հորի վերա:

XXII

Քրնեց են գիշեր Ձենով Ոհանը:
Գիշերն յերազում յերևաց ծերին՝
Մըսրա յերկընթում արև ճառագած,
Սև ամպ եր պատել Սասմա սարերին:

Սաստիկ վախեցած վեր թռռավ տեղից:
— Վա՛յ, կընիկ, ասավ, մի ճըրագ արա՛,
Գընա՛ց մեր անփորձ Դավիթը ձեռից,
Սև ամպ եր իջել Սասունի վերա:

— Հողե՛մ գըլուխդ, ասավ կընիկը,
Ո՛վ գիտի՝ Դավիթն ո՛ւր ե քեֆ անում...
Դու ել քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար յերազ ես տեսնում:

Քրնեց Ոհանը: Վերկացավ դարձյալ.
— Կընի՛կ, Դավիթը նեղ տեղն ե ընկած:
Մըսրա վառ աստղը չողում եր պայծառ,
Մեր աստղը հիվանդ ցոլքում դալկացած:

— Ի՞նչ յեղավ քեզ, մա՛րդ, գիշերվան կիսին.
Բարկացավ վըրեն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց ել յետ Ոհանն յերեսին,
Շուռ յեկավ, քրնեց խըռոված հոգով:

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.
Տեսավ՝ յերկընքի բարձըր կամարում
Վառվում եր Մըսրա աստղը փառահեղ,
Սասմա աստղիկը սուղվեց խավարում:

Չարթնեց վախեցած:— Տունըդ քանդվի, կի՛ն.
Յես վո՛նց լքեցի քու եդ կարճ խելքին.
Կորավ մեն-մենակ մեր ջահիլն անտեր.
Վե՛ր կաց, չո՛ւտ արա, գենքերըս մի բե՛ր...

XXIII

Յելավ Ոհան, գոմը մըտավ,
Չարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Ե՛յ, ճերմակ ձի, մինչ յե՞րբ, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մինչև լույս կըհասցնեմ.»
Ու ձին տըվավ փորը գետին:
— Մեջքդ կոտրի՛, լուսն ի՞նչ անեմ.
Լաշին հասնեմ յես թե՞ նաշին:

Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա ել յերես փորը գետին:
— Ձա՛ն կարմիր ձի, մինչ յե՞րբ դու ինձ
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Մի՛ Ժամի մեջ, կարմիրն ասավ,
Կըհասցընեմ Դավթի կըռվին»:

— Լեղի դառնա, սև մահ ու ցավ,
ինչ տըվել եմ քեզ՝ են դարին:

Հերթը յեկավ սեին հասավ.
Գետին չերես փորը սև ձին:
— Ե՛յ ջան Սևուկ, մինչ յե՞րբ, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին:

«Յեթե ամուր մեջքիս մընաս,
Վոտըդ դընես ասպանդակին,
Մինչև մեկել վոտըդ չուռ տաս,
Կըհասցընեմ», ասավ սև ձին:

XXIV

Սև ձին քաշեց Ձենով Ոհան,
Ձախը դըրավ ասպանդակին,
Աջն ել մինչև չուռ տար վըրան,
Կանգնեց Սասմա սարի գըլխին:

Տեսավ՝ Դավթի նըթույզն անտեր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքև Մըսրա գորքը չոքած,
Ինչպես անծեր ծըփուն մի ծով:

Ոխտը գոմչի կաշի հաղավ,
Վոր չըպատուի իրեն գոռից,
Կանգնեց Ոհան, ամպի նըման
Դոռաց Սասմա սարի ծերից:

— Հե՛յ-հե՛յ Դավիթ, վո՞րտեղ ես գու.
Հիշի՛ր խաչը քո աջ բազկի,
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,
Լո՛ւսը գուրս յե՛կ արեգակի:

Ձենը գընաց դըմդըմբալով՝
Դավթի ախանջն ընկավ հորում.
— Հա՛յ-հա՛յ, ասավ, հորեղբայրս ե.
Սասմա սարից ինձ ե գոռում:

Ո՛վ Մարութա Աստվածածին,
Խաչ պատրաստի իմ աջ բազկի,
Ձե՛ղ եմ կանչել ես նեղ ժամին...
Կանչեց, տեղից յեկավ վոտքի,

Ենպես զարկեց ջաղացքարին՝
Քարը յեղավ հազար կըտոր,
Կըտորները յերկինք թըռան,
Ու գնում են մինչև ետոր:

Յեկավ հորից, կանգնեց ահեղ:
Սարսափ կալավ դև Մեղիքին:
— Դավիթ ախպեր, յե՛կ դեռ ետեղ,
Սեղան նըստե՛նք, խոսենք կարգի՛ն...

— Ել չեմ նըստիլ յես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, զենքըդ առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս յեկ մեյդան, կըռվ անենք:

— Կըռիվ անենք, ասով Մելիք
Իմն ե միայն զարկն առաջին:
— Քոնն ե, զարկի՛ր, կանչեց Դավիթ
Գընաց, կեցավ դաշտի միջին:

Յեկավ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր դուրզն առավ, հեծավ իր ձին,
Քըչեց, գընաց մինչ Դիարբեքիւր
Ու ենտեղից յեկավ կըրկին:

Յերեք հազար լիզը եր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Յեկավ, զարկեց. կորավ փոշում
Ու յերեւաց յերկրի գունդը:

— Յերկիր քանդվեց կամ ժաժք յեղավ:
Ասին մարդիկ շատ աշխարքում:
— Չե՛, ասացին, արնի ծարավ
Հըսկաներն են իրար զարկում:

— Մեռավ Դավիթ ես մի զարկեց,
Ասով Մելիք իրեն զորքին:
— Կենդանի յե՛մ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելքին:

— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից յեկա,
Տե՛ս, վո՛րտեղից հիմի կըզամ:
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծավ յերկրորդ անգամ:

Յերկրորդ անգամ քչեց Հալար
Ու բաց թողեց ձին Հալարեց.
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արտը աշխարհ դողաց թափից:

Յեկավ, զարկեց. զարկի ձենից
Մոտիկ մարդիկ վողջ խըլացան:
— Գընա՛ց Դավիթ Սասմա տանից,
Գուժեց գոռոզ Մըսրա արքան:

— Կեդանի՛ յեմ, կանչեց Դավիթ,
Մին ել արի՛— հերթն ինձ հասավ,
— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից յեկա,
Կանչեց Մելիք ու վեր կացավ:

Յերրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրա,
Ու ենտեղից, դուրզը ձեռին
Քըչեց, յեկավ Դավիթ վըրա:

Յեկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըր զարկով հըսկայական.
Փոշին յեկավ Սասմա դաշտից,
Բըռնեց յերեսն արեգական:

Յերեք գիշեր ու յերեք ուր
Փոշին կանգնեց ամպի նըման,
Յերեք գիշեր ու յերեք ուր
Բոթը տըվին Դավիթի մահվան:

Յերբ վոր անցավ յերեք որը,
Են ամպի պես կանգնած փռչում
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գըրգուռ սարը մեզ-մըշուշում:

— Մելի՛ք, ասավ, ո՞ւմն ե հերթը:
Սարսափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը
Ու տապ արավ գոռոզ հոգին:

Գընաց խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն են խավար,
Վըրեն քաշեց քառսուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռնչալով յեկավ տեղից
Են առյուծի առյուծ փորդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կեծակին,

Առաջ՝ վազեց մազերն արծակ
Մելքի պառավ մայրը ջաղուռ.
— Դավի՛թ, մաղըս ա՛ռ վտարի՛ տակ,
Եղ մի զարկը ինձ բաշխիր դու:

Յերկրորդ անգամ Թուրը քաշեց.
Ես անգամ ել յեկավ քուրը.
— Դավի՛թ, յեթե կուզես, կանչեց,
Իմ սըրտին զա՛րկ յերկրորդ Թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,
Յեկավ Դավիթ յերրորդ անգամ.
— Ես մի զարկն ու Աստված, ասավ,
Ել մարդ չըգա, պետք ե վոր տամ:

Ես անգամ ել քեռի Թորոսն
Առաջ յեկավ ձեռն արած դեմ.
— Դավի՛թ, ասավ, լավ իմանաս,
Կըշեռք պիտի գըցեմ, քաշեմ:

Մորամեղքի յերկու կեսը
Թե հավասար չեկան իրար,
Ել չտեսնես իմ յերեսը,
Դավիթ չես ել դու ինձ համար:

Ասավ, յեկավ ու փոթորկեց,
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, վալլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կեծակին:

Անցավ քառսուն գոմշի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեչին,
Ոխտը գազ ել դենը գընաց:

— Կենդանի՛՛. յեմ, մին ել արի՛,
Գոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լսեց, չատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կեծակից...

—Մեկի՛ք, ասա՛վ, թա՛փ տուր մի քեզ:
Ու թափ արժա՛վ Մեկի՛քն իրեն,
Միջից յեղա՛վ ճիշտ յերկու կես,
Մեկն ընկա՛վ դեսն ու մյուսը՝ դեն:

Ես վոր տեսա՛վ Մըսրա բանակ,
Ձուր կըտըր՛վեց ահ ու վախից:
Դավիթ կանչեց.—Մի՛ վախենաք,
Ակա՛նջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչալար մարդիկ, ասա՛վ,
Ձուրկ ու խա՛վար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցա՛վ,
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ի՞նչ եք առել նեւ ու աղեղ,
Յեկել թափել ոտար դաշտեր.
Ձե՞ վոր մենք ել ունենք տուն—տեղ,
Մենք ել ունենք մանուկ ու ծեր...

Ձանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ
Հողագործի որ ու կյաքից,
Թե՞ զըզ՛վել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք յեկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին ել զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,

Հորում լինեն քառսուն դաղ խոր
Թե ջաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դեմ, ինչպես ետոր,
Սասմա Դավիթ, Թուր-Կեծակին:

Են ժամանակ Աստված դիտել,
Ով մեղանից կըլնի փոշման.
Մե՞նք, վոր կելնենք ահեղ մարտի,
Թե դուք, վոր մեզ արիք դուշման...







ՀՀ Ազգային գրադարան



NL0340272

3.2404